

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գինն 8 ՄԷՃ
Վաւաւաց 10 ՄԷՃ
Վաւաւաց 4 ՄԷՃ
Վաւաւաց 5 ՄԷՃ
Իւրաքանչիւր թերթի գին 60
Վրայնաւեցան տողը մէկ անգամի հաւար 3 զուրուշ, երկու անգամի հաւար 2 զուրուշ, աւելի անգամի հաւար անարգատ սակարկութիւն կըլլայ:

ՊԱՅՄԱՆՔ

Կուրս դազած լրագրաց ճան ու
նայքը իմրագրութեան վրայ:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
յամ որ եւ ինչ գրութիւն իմրագիր
—Տարեկան պիտի ուղարկուի: Պ.
Իս. Չինիլի խան, Մասիսի գրասեն
նակը:
Համար ծախքը չվճարուած ճ.
ճակ չընդունուի:



Լ Ր Ա Ք Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 25 ՅՈՒՆԻԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ ազգային ժողովին աջա
կողմէն մեծամասնութիւնը միապե
տութիւն հաստատելու համար երեք
տարի շարունակ ամեն ճիշդ թափելէ
ամեն հնարք խորհելէ և ձեռնու
նայն կէնքէ կտակ, վերջապէս գտնէ
առայժմ՝ յուսահատելով, հանրա
պետութիւնը եօթն տարի շարունա
կել ապու հարկն ընդունել, և ներ
կայ կառավարութիւնը կազմուորե
լու համար պէտք եղած սահմանադ
րական օրէնքներն հաստատելու ձեռ
նարկեց. օրէնքներ, որք թէ և հան
րապետութիւնը վերջնական կերպիւ
հաստատելու և կազմուորելու մտօք
չինուած չին, բայց անուղղակի
նոյն վիճակին կը հասնին:

Միապետականք զայս զգալով,
առաջարկեալ սահմանադրական օ
րէնքստարը կը քաշեն, կը քաշըն,
հանրապետութեան վերջնական հաս
տատուելուն նպատակով չըլլալու
համար ամեն միջոց ի գործ կ'գնեն,
բայց տրամախոհութեան անօրք զօ
րութեանն ընկճելով՝ ուղղակի չու
ղածին անուղղակի ընդունելու
կը հարկադրին:

Հանրապետութիւն հրատարակե
լու առաջարկութիւնն 333ի դէմ 359
քուէով մերժելէ ետեւ, հետեւեալ օ
րը որոշեցին թէ հանրապետութեան
նախագահն երեսփոխանական և ձե
րակուտի ժողովոյ միացեալ միջա
մանութեան քուէով կընտրուի եօ
թըն տարուան համար և վերջնորե
լի է:

Այս երկու որոշմանց հակասու
թիւնն ակնհերեւ կը տեսնուի:

Հանրապետութեան նախագահին
ընտրութեան ձեւն որոշել և երընտ
րելի յայտարարել, հանրապետու
թիւնը հրատարակել ըսել է:

Այս պատճառաւ ձախակալեանք
մանակեցեցան այս վերջին որման,
որովհետեւ շատ նպատակաւոր ի
րենց:

Նմանապէս շատ նպատակաւոր է
նաեւ երեկուան հեռագրով եղած
որոշումն, որ հանրապետութեան
նախագահին և ոչ անձնապէս միայն
—Մահոն մարաշխախին՝ իրաւունք
կուտայ ձեռնարկուտին հասանութիւնն
ստանալով ազգային ժողովը բժե
լու. որոշում մը՝ զոր ձախակալե
եանք առաջարկած են:

Ասոնց վրայ յաւելցնելով Պ.
Տիւֆուր հանրապետականին աննա
խօտութեան վերմ ծախահարու
թեամբք ընդունելը, տարկայս
չմնար որ հանրապետականք լազ
թութիւնը տարած են ժողովմէջ,
և ինչպէս հեռագիրն ալ կըլլային:

այս յաղթութեան հետեւանքը չա
փաւոր կամ պահպանողական հան
րապետականներէ նախարարութիւն
մը կազմուելու հաւանականութիւնն է:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 1 փետր.
Ռիթմերի հեռագրական գըրա
սենեակը կը ծանուցանէ թէ Անգ
ղիա Բեդքամբուրի մէջ գումարուե
լիք գետապանխորհուրդին իր կող
մէ երեսփոխան զրկել չուզեր:

Փարիզ 1 փետր.
Գաղղիա ճանկեց Ալիֆոն թագա
ւորին կառավարութիւնը:

Ազգային ժողովոյ աջակողմը կա
ռավարիէ անձնապէս իրաւունք տալ
Մաք—Մահոն մարաշխախին՝ առանց
ձեռնարկուտի ժողովոյ հաւանութեան
ազգային ժողովը լուծելու: Չախակալ
մը կուզէ այս իրաւունքը հանրապե
տութեան նախագահին տալ ձեռա
կուտին հաւանութեամբ:

Պ. Օկիւսթ Բոնիթէ կ. Պոլսու ու
պանրական գետապան տեսանեցաւ:

Պէլիքաւ 1 փետր.
Թէ և ազգային ընդհանուր ժո
ղովը հարցման մը վրայ վիճարանե
լու առթիւ վտաստութեան քուէ
տուաւ կառավարութեան, բայց և
այնպէս կառավարութեան անգամ
ները մէջերին անհամաձայնութեան
պատճառաւ հրաժարական տուին:

Իշխանն արտաքին գործոց և երու
մբոյց նախարարներէն զատ միւսնե
րուն հրաժարական ընդունեցան:

Թագաւորին զօրքերը Բախէլուն
քաղաքը Բարբանանց ձեռքէն ա
զատելու կերթան:

Հիւսիսի կողմը թագաւորին բա
նակը քանի մը մասնական յաջողու
թիւններ ձեռք բերաւ, և բազմա
թիւ գիւրքեր առաւ Բարբանանց
ձեռքէն:

Վերսայլ 2 փետր.

Ազգային ժողովը կը շարունակէ
սահմանադրական օրինաց վիճարա
նութիւնը, և հանրապետութեան
նախագահին իրաւանց և պարտեաց
խնդիրը ձեռք առած է:

Ազգային ժողովը լուծելու իրա
ւանց մտան Պ. Վալոն չափաւորում
մ'առաջարկեց 1848 սահմանադրու
թեան վրայ հիմնեալ, որ հանրապե
տութեան նախագահին իրաւունք
կուտայ ազգային ժողովը լուծելու,
բայց ձեռնարկուտի ժողովին հաւանու
թեամբ:

Սահմանադրական օրինաց յանձ
նաժողովը խնդրեց որ այս չափաւո
րումն մերժուի և միայն Մաք—Մա
հոն մարաշխախին իրաւունք տրուի
ազգային ժողովը լուծելու առանց ձե
րակուտի ժողովին գործակցութեան:

Մայթա 2 փետր.
Սե ծովուն եզերքը գտնուող և

կենդանեաց հիւանդութիւն ունե
ցող երկիրներէն եկած վաճառաց
մուտքն արգելուեցաւ:

Մարիտ 2 փետր.
Նոր թագաւորին ճանչուելը կա
տարուած իրողութիւն մ'է:

Մորիսէն զօրավարը՝ Մօնրէալ,
Լարէնթիլա և Լէրկա քաղաքները
գրաւեց: Բամբէլուն քաղաքին Բար
նունեաց պաշարուէն ազատուին ալ
խիտ մտա կը համարուի:

Գերմանացի նաւատի մ'ապանը
եցաւ կուույ մը մէջ:

Պէլիքաւ 2 փետր.
Արտաքին գործոց և երումբոյց
նախարարներն ալ վերջնական կեր
պիւ հրաժարեցան, և առայժմ ի
րենց պաշտօնակիցները գրաւեցան
անոնց տեղ:

Փարիզ 2 փետր.
Ազգային ժողովը 249 ի դէմ 449
քուէով ընդունեց ձախակալման ա
ռաջարկութիւնն, որ էր հանրապե
տութեան նախագահին իրաւունք
տալը:

Այլ կեդրոնը ձախակալման հեա
քուէ տուաւ:

Այս առաջարկութեան վրայ վի
ճարանուած միջոցին Պ. Տիւֆուր ա
տենարանութիւն մ'ընելով հանրա
պետութիւնը պահպանողական օ
րէնքներով կազմուորելու խորհուրդ
առաւ, և իր խօսքերը վերմ ձա
փահարութեամբք ընդունուեցան:

Կը կարծուի որ այսօրուան քուէ
նն վրայ Տիւֆուրեան նախարարու
թիւն մը կազմուի:

Լոնտոն 2 փետր.

Պ. Տիւֆուր 40 7/8—41

Իս. 4865 66

» 4869 55 1/4

» 4874 66 1/4—1/2

» 4872 78 3/4

» 4873 52 3/8

Նոր փոխառութիւն —

Ազգ. քու. 92 5/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական կառավարութիւնը
վերջնական կերպիւ մերժեց Աւե
տարանական ուխտին պատգամա
ւորութեան խնդիրը, զոր մայրա
քաղաքիս անգղիական գետապանին
ձեռք մատուցած էր, այն է վեհ.
Սուլթանին ներկայանալ և թուրքիոյ
մէջ կրօնական աղատութեան նկատ
մամբ յիշատակաւոր մը ներկայացնել
ն. կ. վեհապետութեան:

Բ. Գուուր պատասխան տուեր է
յիշեալ պատգամաւորութեան թէ
պաշտօնական սովորութեանց և ա
րարողութեանց հակառակ է ան
պաշտօն անձանց վեհ. Սուլթանին
ներկայանալն այսպիսի նպատակաւ
մը, որչափ և յարգելի ու նշանաւոր
անձինք ըլլան ներկայանալ ու զրգ
ները. հետեւաբար խնդրեր է որ

այն յիշատակաւորը Բ. Գուան յանձ
նեն, որպէս զի արտաքին գործոց
նախարարն, առ որ միայն կը պատ
կանի այս գործը, վեհ. Սուլթանին
ներկայացնէ սովորական կերպիւ:

Այս պատասխանէն պատգամա
ւորութիւնը դո՛ւ չըլլալով, մտադիր
է եղեր այս շարթու մայրաքաղա
քէս մեկնել:

Ինչպէս որ մեր երեքարթի ա
ւուր թուով զխտորութիւն ըլլած է
նք, յիշեալ պատգամաւորութեան
ձեռնարկութիւնը սխալ տեղեկու
թեանց վրայ հիմնեալ բողոքի մը
կերպարանք կառուար Բ. Գուան
ըէմ, իր այն թէ կայսերական կառավա
րութիւնը խղճի և կրօնի աղատու
թեան սկզբունքն էրողոյց քաղա
քակիրթ ազգաց նման յարգած ու
գործադրած չըլլայ:

Այսպիսի գանգաւ մը, ինչպէս
որ կը յուսայինք, չէր կրնար ըն
դունուիլ կայսերական կառավարու
թեան կողմէ, և զս. Տիւֆուր որ մեր
սուսցաւ, ստանալով անոր շնորհ
հետեւանքը մեր ազգին աւելի միա
սակար էր. որովհետեւ ամերիկացի քա
րողքը գլխաւորաբար մեր ազգն ի
րենց շահուն նիւթ և գործիք ընելու
գիտում ունին, ինչպէս որ պատգա
մաւորութեան անցեալ ուրբաթ ա
ւուր ժողովին մէջ եղած յայտարա
րութիւններէն յայտնի կըտեսնուի:

Վեհ. Սուլթանն առաջին կարգի
Մէհմետի պատուանշան շնորհեց
Տրապիզոնի նորընտիր կուսակալ
Նուսրէթ փաշային:

Բերկրութեամբ կըմանուցանենք
թէ կայսերական կառավարութիւ
նը զինուորական նախարարութեան
թարգմանատան գիւանին անօրէն
Մամիկանեան Մեծ Միքայէլ Մուրա
տէֆէնտին երկրորդ կարգի պաշտօ
նատարութեան տնտեսան շնորհեց:

Շարաթ օրը ձիւղալիի յունեաց ե
կեղեցոյն աւազ երէցն՝ որ հազիւ
յիսուն տարեկան կար և քաջա
ւաղ մարդ մ'էր, յանկարծական
կաթուածով մեռաւ:

Հետեւեալ օրն ալ Գարաբեղ
մարդ մը թրամուայի կառքը նստե
լու ժամանակ կաթուածահար մեռաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍՏԱՄԵ ՈՒՄՈՒՄԵՆ

22 յունի. չորեքշաբթի իրիկուս 43 3/4

23 » հինգշաբթի առուստ

բացուեցաւ 46 3

45 30

կէս օր 4. Պոլսու 22 յունի.

Պոլսի թէ ձեռնարկի բաժինք Մեղրի 7 18

» փոխանակութեան » 5 15

կ. Պոլսու Պանքային » 6.13

Քրէտի ժեշտայ » 44

Քրէտի ժեշտայ—Թիւրք »

կերպիւ զեաց հին 3ր. 120 1/2

Փ.ի.	1863	»	328
»	1865	»	332
»	1869	»	279
»	1872	»	78
»	1873	»	262
Թրամուէր	Թմ. լր		3 75

Ս. Ջ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Սնդու. Երա	140. 6
Նարոյն սակի	87. 37
Ինքնախառն Ռուս	89. 5
Գրք. Կիս	54. 10
Հինգ ֆրանք	—
Հինգ ցոց	105
Պղինձ	129. 10

Ա. Ջ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Սնդույին ընդհանուր ժողովոյ վերջին նստին մէջ նորոնոր երեսփոխանաց վաւերացման միջոցին Աւստրիական Մատթէոս Էֆէնտիի մէկ հրատարակիր կարգացուցաւ, որոյ մէջ յիշեալ էֆէնտիին իւր հրատարական իբր շարժառիթ ցոյց կուտայ: այնտիս անհետեւ և անտեղի պարագաներ, զորս կը զիտանը նախապէս ուշադրութեամբ առնուր, անտարակոյր ենք թէ ժողովին առեանը հանրու բնու չէր համարձակելը, ինչպէս որ ընթերցման ժամանակ երեսփոխանաց մեծագոյն մասին կողմէ տեսնուած դժգոհութեան նշանները մեր բառը կապացուցանեն:

Բայց տեսնենք թէ ի՞նչ են Աւստրիական Էֆէնտի հրատարական պատճառները, զորս իբրև բողոք կամ ամբաստանութիւն կը ներկայացնէ ազգային ժողովոյ, ոչ միայն երեսփոխանաց ունեցող այլ և մասնաորակէս մեզի դէմ, որ՝ ոչ թէ իւր երեսփոխան, այլ իբրև խմբագիր, յիշեալ էֆէնտիին և անոր քանի մը համապատասխան գործողութիւնները, որոնք զոքոյն և ամբաստանութեանց անտարապետութեան համեմատ:

Մեր շինք կարծեր որ ազգային ժողովը զիջանի նկատարութեան տանու անձնակազմութեան վերաբերեալ այս անտեղի ամբաստանագիր մը, որ ազգային հանրական խնդրոց միայն զբաղուելու հոգով և պաշտօնն ունեցող ժողովոյ մը թանկագին ժամերն անձնակազմ կրնայ և թշնամութեանց զոհերու յանդուգն վարձէ մը դատուելիք բան չէ:

Եթէ Աւստրիական Էֆէնտի մեզ և այլ անձանց դէմ բողոք կամ ամբաստանութիւն մ'ունենէր, փոխանակ երեսփոխանական ժողովն ի զոր բնութեան վերաբերեալ, յաւ կընէր վարչութեան փող. ժողովոյ դիմելով՝ դատ պահանջել այդ անձանց դէմ, ինչպէս որ օրէն է ոչ միայն Յուրբոյ՝ այլ և ամեն քաղաքակիրթ երկիրներու մէջ: Այս օրինակը և բանտոր միջոցը թողով՝ երեսփոխանութեան դիմելն յայտնի կը ցուցնէ թէ դատ պահանջելու համարձակութիւնը չունի, և միայն երեսփոխանութեան անջե անձնակազմ ատկութիւն յազեցնելու նուազ փորձով մը կը շատանայ, որ փոքրագի անձանց միայն յատուկ է:

Աւստրիական Էֆէնտի կը պահանջէ Ս. Պատրիարքէն որ իւր և համախոհացը դէմ երեցած ժողովրդային բողոքներու անջե անտարբեր չմնայ, աւարկելով թէ անհասական գատարապետութեան սպասելու պէտք չկայ:

Այս մասին մեր ալ կատարելապէս համակարծիք ենք Աւստրիական Էֆէնտիի պահանջման. այս, մեր ալ կը փախաբինք, և ինչպէս ասիէ

ուսալ ալ շատ անգամ ըսած ենք, նորէն կրնենք, թէ վարչութիւնը պէտք չէ անտարբեր մնայ ազգային պաշտօնաւորաց և մասնաանդ կեղեղեցականաց դէմ տեսնուած ամբաստանութեանց, յարձակմանց և վատահամբաւութեանց առջև, որք թէ Աւստրիական Էֆէնտիին և թէ իւր միջանի համախոհներուն կողմէ թէ իւր և թէ դրով լուսած ու հրատարակուած են ինչպէս և շարժառիթ խորհրդարանին մէջ նայն ինքն Աւստրիական Մատթէոս Էֆէնտիին իրիմեան սրբազանի անձին, երեսին, մարտի և այլն և այլն դէմ արձակած անտեղի հայհոյութիւններն, որք բաց յիւր քանի մը համախոհներէն հոն գանուող ու լսողներուն նախկինք և միանգամայն զայրոյթ պատճառած էին, և անոնցմէ ամենք իրենց ստորագրութեամբ բողոքը հրատարակել տեսած էին Մատթէոսի մէջ:

Մտնցնել է արդեօք Աւստրիական Էֆէնտի այն դուռ հիպոկան անպատկառ հայհոյութիւնները բարձրաստիճան եկեղեցականի մը և Պատրիարքի մը դէմ, և հիմա ելեր իրեն և իրեն պէտքերուն դէմ՝ իրաւամբ բողոքող ժողովրդոց և անոնց արձագանգ ելող լրագրոց մը իմբագրին դէմ ամբաստանութիւն կընէ. ամբաստանութիւն որ իւր դատարարութեան դատարարիքը պիտի ըլլայ եթէ օրինուոր քննութիւն և դատարանի բացուի:

Արդարև շատ ծիծաղաշարժ բան է տեսնել որ այս և ասոր նման ծանրը ամբաստանութեանց ներքեւ գանուող անձինք ինքզինքնին միայն ազգային շահոց ի նպատակ դարձող և խօսող կանտաններ, որպէս թէ ազգային երեսփոխանութեան ամենամեծ մասն ազգային շահոց ի ներպատակ խօսելու և դարձելու արամադութեան էֆէնտիին այս յայտարարութիւնները չհամարենք չէ՞ ազգային երեսփոխանութեան մեծագոյն մասին, որ ոչ թէ իրենց պէտք կը յազեցնելու կամ անտեղիութիւն տածելու դիտում ունեն, այլ իրք ազգին շահերը պաշտպանելու մտադիր են: Եթէ իրեն և իրեն պէտքերուն մտաբ, թէ երես ազգային երեսփոխանութեան դոյնութիւնն իսկ վտանգի մէջ ինչոք:

Բարեբաղդաբար Ամեն Ս. Պատրիարք Էտոյն այդ վտանգներուն առաջըն առնու՝ իւր հրատարակած երկու նամակներովն, որք այդ խմբակին բերան և դարձիք եղող լրագրաց ամենց ազգային և խառնոյց հրատարակութեանց, հայհոյութեանց և անուանարկութեանց արժանի դատարարութիւնը տալով, վերաբերեալ սիրտերը բաժեցին, և ժողովրդեան մէջ տիրած յուզմունքը դաբարեցուցին:

Ինչ կուզէ Աւստրիական Մատթէոս Էֆէնտիին նորէն միտքերը դրդուել սրտերը խառնել և անցեալ երկու տարիներուն տեսուր յիշատակները նորագրով ազգին մէջ յազմունք և վրդովմունք հանել, պղտոր ջուրի մէջ սր ընելու համար Ծատ հասակական է. բայց մեր չենք յուսար որ երեսփոխանական ժողովն և Ս. Պատրիարք հայրն այդպիսի չարանիթ ծուղակի մը մէջ չիյնալու համար պէտք եղած խոհական նախատեսութիւնը չունենան:

... Խմբագիր  
Յունիս 18 ամսամուտով լրագրոյց մէջ Օրացոյցի վիճակագրական մասին նկատմանը դիտարկութիւններ տեսնուեցան: Օրացոյցի յաւելուածի մասերն, որոնցմէ է նաև վիճակագրութիւնը, մեր

կողմէն դրուած ըլլալով՝ հեռաւորարանայն պատասխանելն մեզի վերաբերեալն՝ կը փութամ ուղղել Ձեր մեծ սպասուածութեան ներկայս ի հրատարակութիւն:

Ռուստրիական հայոց նկատմանը դրուած տեղեկութիւններն Ռուստրիական և Օրացոյցի տարաբնուութեան միջոցին Պոլսու հասած ընտանեկան տոմար անունով այն տեսակէն առնուած են, որոյ մասին Ձեր լրագիրն գովութեամբ խօսեցաւ. հարկ չէ ըսել թէ իւր և իւր սխալներ կան նոյն տոմարին խմբագրութեան կը վերաբերին. աւելորդ է ըսել նաև թէ մենք պարտաւոր չենք անոր ճշգրտութեան համար Կ. Պոլսէն մինչև Ռուսաստան ընտանեկան բանալու: Ձեր Արցոյց նամակագիր Պ. Յովհաննէս Հովոսեան, որ եթէ չենք սխալիք բաւական տարիներ կախողեցանք զարգացութեան պաշտօն վարած է, բնականաբար մենք տակի լաւ տեղեկ ըլլալու կը ցոյց մտնին. բայց ինչպէս որ իրաւամբ Ձեր մեծ սպասուածութիւնն ալ կատարած յայտնած էր, անոր ցոյց տուած թիւն ալ հասանակաւ ինքն շատ հետի էր. ոչեք է յիշել նաև Ձեր հին թերթերէն մէկուն մէջ Ռուստրիական հայոց համար երկու միլիոնէն աւելի\* նշանակուած թիւն ալ զոր բարձրաձոր Սրբազան Պատրիարք հայրն Ռուսաստանէն վերադարձած միջոցին տուած տեղեկութիւններէն քաղելով հրատարակած էր: Այժմ է յիշել նաև 1873 թվին Ղազարեանի հրատարակած ընդարձակ տարեցոյցին մէջ դրուածն ալ որոնք մեր գրածին հասանակաւ թիւնը կը հաստատեն:

Ինչ զից և չնկատանի հայոց թվուցն գաղով 15000 դրած ենք թէ և, բայց տողարկան սխալմամբ 150000 էր եղած յաւաքացն՝ որն որ ուղղուած է վերջնոց մէջ, ինչպէս որ նոյնն է վերջիջեալ Ղազարեանի տարեցոյցին հետ:

Իսկ եւրոպական տեղութեանց վիճակագրութեանց մասին կարծեցեալ սխալութեանց համար կընենք արդոյ նամակագրին, որովհետև ամբողջ Եւրոպոյ ժողովուրդն ընդունած է նոյն վիճակագրութեանց ճշգրտութիւնն, ինչպէս որ Օրացոյցին

յիշած ենք, անոնք չէ թէ արդոյ նամակագրին կարծեաց համեմատ հինգ կամ տասն տարուան հինգու տեղեկութիւններ են, այլ հարիւր տասն և երկու տարիներէ ի վեր կարծեած Գերմանական մեծ ընկերութեան մը կողմէ խմբագրեալ և խրաբանչիւր ասոր հրատարակուած երեսուցի տարեցոյցի մը քաղուածըն են:

Ի վերջոյ՝ ... Խմբագիրն, ինչպէս որ Օրացոյցի յաւելուածոց սկիզբն դրուած ծանօթութիւն վերաբերով մասին մէջ յիշուած են, որն որ մեր ստորագրութիւնն կը կրէին, կարծեմ իրաւացի չէր այդ կարծեցեալ սխալներն Տէր շոր վերագրելն, և անտեղի չէր համարուել եթէ կասկած չէր թէ զիտում մը կարատոր մէջը: Ինչ և է, ներկայիս հրատարակութիւնն ինչբերով:

1875 յունիս 20 - Կնամ յարգանքը ՊԵՏՐՈՍ Տ. ԵՐԵՄԻԱՆԵՆ

ՇԵՆՈՐՀԱՅԱՍԻՓԻՆ

Խմբագրապետ Տէր. ԹԱՏՐՈՍ օրամթերթը երկամեայ դադարի հրաման ստացած և ԱՍԻՍ կապաւ խափանուած տունէ՝ մի քանի պատուարժան ազգայիններ փութացին Մատնաթողով կազմել և հանրականութիւն բանալով նպատակ նոցա, ինչպէս արդէն հրատարակուած է Ձեր պատուական լրագրութիւն մէջ:

Այդ մասին շնորհակալութիւնն իս, որպէս մեր պարան էր, կը դամբ այսօր հրատարակաւ յայտնել ժողովուրդին, զի ոչինչ նուազ քաշալեր և բերեցանութիւն էր մեզ այդ ոչ թէ նմա համար որ նիւթապէս նպատակեցին մեզ, այլ զի դործնա-

\* Միլիոն ու կէս նշանակուած էր Կան, Խմբ.

կանապէս հաստատեցին թէ կենդանի է ժողովուրդը և թէ այդ լրագիրները խափանել ժողովուրդին ձայնը խեղդել էր:

Մատնաթողովն շնորհակալութիւն կը յայտնէ Ձեր հանդանակիչ մտանաթողովին, որ ազգասիրական բուն զգացումէ դրդուած, առաջնորդ հանդիսացաւ այդ մասին, Հարկ չենք տեսնել երկար խօսիլ իւրեանց համար, զի մատնաթողովին անդամները՝ որք են Մեծ. Յակոբ Ս. Պողոսեան, Յովհաննէս Մոսախեան, Յ. և Ս. Միլիւքեան և Միհրան Սարգեան Էֆէնտիները, արդէն շատերի ծանօթ են իւրեանց ազգասիրական եռանդով:

Ռուսի սոյն երկաթողով շնորհակալութիւնն իս հրատարակաւ յայտնելով թէ ժողովուրդին և թէ մատնաթողովին յորմէ ամբողջապէս ընդունած ենք հաւաքած հանդանակը, կը ինքեմք ի Ձեզ ևս, ... Խմբագիր, որ հաճիք ներկայիս միանկիւն շնորհել Ձեր պատուական լրագրութիւն մէջ:

1875 յունիս 21 Ձեզ միշտ անձնուէր Կ. Պոլսի Մ. Փարթաբուխեան

Խմբագրապետ.

Դանտիլի երկու վարժարանի շինութեան հանդանակութիւնն ամբողջացնող յետագայ վերջին ցուցակըն ալ հրատարակել բարեհաճեցէք: Մատնաթողովն այս անգամ անտեսանալ արգաւանջ հրաւեր վարդար իրենց լուսն շղատարու, այլ հանդանակութեան գումարաւ ըլլալու համար՝ միայն իրենց դիտարարութիւնը կը խնդրէ:

Կը մնայ հրատարակաւ շնորհակալութիւն յայտնել նպատատմանոց բարեխիտաց, որ և քիչ օրէն առ Սոս. Ենոս. Մարտիկին ուղղութիւնը պաշտօնական համարապետութիւններնու մէջ պիտի տեսնուի:

ՑՈՒՑԱԿ Է.

Նախորդ ցուցակին դուրսը	13833.20
Եկեղեցոյցի ապրիլին գոյացած	116.30
Հին չեղն վայրերէն ծախուած	436
Պ. Թաթևու իւթիւնեան	66
Համարն Պ. Սարգիս	4
Գրիգոր զարգիւն աշակերտները	30
Բերեանի Յ. Յոյն փառաւական մը	120
» Գաւիթ աղայ	43
Սրբաճի ուստա Գրիգոր	20
Տերեղի» Սարգիս	33
» Բոսթի	10.20
Տօրոսմի Պ. Համար	60
Սիմոնի աղա Խանձեան	1200
Մոսկապար աղա Ալեքսանեան	30
Աշուհի Երկիր Մշտըրեան	120
Վսեմ Գարսեթիւն պէ Ջառեան	600
Պ. Ստանիկ Տ. Մարդարեանց	240
Պարա Էֆէնտի Խոճատարեան	23
Ազնոական Պաղտատար աղայ	
Շապուրթ	1800
Վ. Ն. աղա Սիմանեան	1200
Ստեփան աղա Կրմանեան	30
Յարթիւն աղա Թեւրապեան	150
Ենիճամիլի դարբինները	60
Գրիգոր զարգիւն գանձանակէն	323.10
Երուր Խարայել	40
Թէրթի շրէպի	79.20
Քիլճի Վասիլ	29
Օրիգ Ջիպա Կուրճանեան	240
Գրիգոր աղա Խոջատարեանի ձեռնարկ	3537.20
Ծարած քերթատ	120
Տէր Մարկոս Խոջատարեան (Չ հոյսոյ հին դամ)	75.30
Սենիկ աղա Պաղայեան (90 կենսար կիր)	630
Մե Խոյսեան եղբարք (2 վառի չրֆիցոյ)	240
Տօրոսմի Պալի աղա (2 զոյգ դրան զգրամ)	270
Եր աղա Շահպաղեան (չարը և	

Table with 2 columns: Description and Value. Includes items like 'Բեքիճ (Թուրք 700)' and 'Խոնճի Գովհաննէս աղա'.

Համագումար 26133.30
Ի Վ. մաց
Շինութեան Մասնագործաց
Ա. Յ. ԱՅԱՍԵԱՆ

ԱՌՆԻՏՐԵԱՆ

Table with 2 columns: Description and Value. Includes 'Կ. ՊՈԼԻՍ 22 ՊՈՒՆՎ. 1875' and 'ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Պորտալի հոսանք' and 'Բաժարա կէյլ'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Կեանքիս Էնկ. հո.' and 'Կարգի լիճ (Երկր) 34-36'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Սահման փոփոխ հոսանք' and 'Սահման փոփոխ հոսանք'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ' and 'Խաչիկ Բիւս Ա. տես. 100 օսու'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Պրոպագանդա 41-42' and 'Բեյթրոյ (կաշ) Ամեր. սնու'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Ամեր. Թրիկս 9-13 1/2' and 'Կարող էր Սիդիկ օսու'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'ՄԵՏԵՂԻՔ' and 'Նրդաթ Թրիկս սնու'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Յարեն կարծր Ազալա քիլ 34-37' and 'Կիրքս Ազալա'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Նշխարացոր. Գանուր' and 'Բոթիկ Օրոսու'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Օտնա Ա. տես. 60 հոսու' and 'Բ. Բ. Բ. 416-418'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'ՄԱՆԻՏԱՅԻՆՈՒՐԱ' and 'Մահուան'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Բուսման Երկրամեջակայ Բաժին' and 'Ներուան 30 րդ'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Պրոպագանդա 41-42' and 'Կարող էր Սիդիկ օսու'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Պրոպագանդա 41-42' and 'Կարող էր Սիդիկ օսու'.

Table with 2 columns: Description and Value. Includes 'Պրոպագանդա 41-42' and 'Կարող էր Սիդիկ օսու'.

Table with 2 columns: Description and Value. Includes '400 Քրոն 2-4 1/2' and '5501 302076'.

Table with 2 columns: Description and Value. Includes '5502 302077' and '5503 302079'.

Table with 2 columns: Description and Value. Includes '5505 302080' and '19396 363366'.

Table with 2 columns: Description and Value. Includes '19397 363367' and '19398 363369'.

Table with 2 columns: Description and Value. Includes '19399 366761' and '19400 366762'.

Table with 2 columns: Description and Value. Includes '26116 336763' and '26117 336765'.

Table with 2 columns: Description and Value. Includes '26148 375616' and '26149 375617'.

Table with 2 columns: Description and Value. Includes '26120 375618' and '40936 375620'.

Table with 2 columns: Description and Value. Includes '40937 422146' and '40938 422147'.

Table with 2 columns: Description and Value. Includes '40939 422148' and '40940 422150'.

Table with 2 columns: Description and Value. Includes '79144 471486' and '79143 471487'.

Table with 2 columns: Description and Value. Includes '79144 471488' and '79145 471489'.

Table with 2 columns: Description and Value. Includes '97601 471490' and '97602 493616'.

Նախա անանձին յիշատակարաններ: Մշոյ Ս. կարգադրութի վանից ձեռագիրը...

Կրգանուի ամեն շոյ դրամագու- ապ քով եւ Պահճէ գարու Սուճի Պ. Պողոտին խանութը...

Վ. Բ. Պ. Ա. Կ Նախընթաց թուով հրատարակ- ւած հեռագրալուրերուն առաջինին...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Տօրիւր Ներսէս Մէլգարեան պատրաստ է հեռագր. ք. քննարկել իր...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Մօսիւ մէկնան Ծանօնիկ կամըլի դիտել թիւ 72 մեծ դեղարանը...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Պէյրօզ Տէպաղլանէի ամիրէսի իշին միւլապիսա օրունաճաք օլուն...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Պիւնէի մասնաճաքը քրէյ 10500 պէճէր քրէյսի 32 քրէյսի...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Լաքէ Բուղէի քրէյ 5250 պէճէր քրէյսի 2 քրէյսի...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Սիւլաի վէ թօփուս գաղթման սէյֆի պէճէր ասէտի 75 քրէյսի...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Սիւլաի վէ թօփուս Կեֆէրաթ սէյֆի պէճէր ասէտի 70 քրէյսի...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Թօփուսէի ամիրէ իշին լուս մի օրուս միւլապիսայէ գոնըրան Սիւնէի մասնաճաքը...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Լաքէ Բուղէի վէ սիւլաի վէ թօփուս գաղթման վէ Նէֆէրաթ Սէյֆէրի ֆիւսթի մուրաք...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Սիւլաի վէ թօփուս Կեֆէրաթ սէյֆի պէճէր ասէտի 70 քրէյսի...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Թօփուսէի ամիրէ իշին լուս մի օրուս միւլապիսայէ գոնըրան Սիւնէի մասնաճաքը...

ՆԱՆՈՒՑՈՒՄ Լաքէ Բուղէի վէ սիւլաի վէ թօփուս գաղթման վէ Նէֆէրաթ Սէյֆէրի ֆիւսթի մուրաք...

ՀՐԱՐԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Description and Value. Includes 'Հնոց եւ Նորոց Հրատարակչաց Սըժ. Գործէի Կարգա- պէս Սըրուսթիւն'.

